



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՔՆԵՐ՝  
 ՄԱՍՆԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒԹԵԱՄԲ  
 ՀՈԳԵՒՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՄՔԵՐՈՒ**

Հայկական Ցեղասպանության ոգեկոչման 92-րդ տարեդարձին առիթով, 23 եւ 24 Ապրիլին, հոգեհանգստեան արարողութիւններով, Ս. Պատարագով ու քաղաքական եւ մշակութային ձեռնարկ-հաւաքներով, հաւատացեալ եւ ուխտաւոր հայ ժողովուրդը անգամ մը եւս խոնարհեցաւ Ցեղասպանության զոհ գացած բիւրաւոր նահատակներուն յիշատակին առջեւ եւ վերանորոգելով հաւատարմութեան ուխտը նահատակաց կտակին՝ վճռեց անյողդող ու միասնական ճիգերով շարունակել ազգային մեր պահանջատիրութեան արդար Դատը՝ շեշտելով Ցեղասպանության ճանաչման անյետաձգելի հրամայականը:

**Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԿԼԵՆՏԵՅՆԻ  
 Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՅ ՄԷՋ**

Ցեղասպանության 92-րդ ամեակին նուիրուած կրօնական եւ քաղաքական ոգեկոչումներու եւ հանդիսութիւններու համազգային ծիրին մէջ, Երկուշաբթի, 23 Ապրիլ 2007 երեկոյեան ժամը 7-ին Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ նահատակաց անմեռ յիշատակին մատուցուեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ, հանդիսապետութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ ներկայութեամբ հայ յարանուանութեանց հոգեւոր առաջնորդներու եւ հայ եկեղեցականաց դասուն: Օրուան պատարագիչն էր Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Պատարագի ընթացքին, յարգանքի խօսք արտասանեցին Առաջնորդ Սրբազան Հայրը ինչպէս նաեւ Հայ Աւետարանական Միութեան Հովիւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան եւ Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հայր Անտոն Վրդ. Սարոյեան:

Յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցականաց եւ դպրաց դասու թափօրը եւ պաշտօնական հիւրերը, Թեմիս ժողովականութեան ներկայացուցիչներն ու բազմահարիւր հաւատացեալներ, եկեղեցիէն դուրս գալով, հաւաքուեցան եկեղեցւոյ կից Ապրիլեան նահատակներու յիշատակին նուիրուած Խաչքարին առջեւ, ուր նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր՝ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն:

Եկեղեցական արարողութեանց աւարտին, ժողովուրդի մասնակցութեամբ

երգուեցան «Կիլիկիա» եւ «Մեր Հայրենիք» երգերը:

### **ՀՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ ՄԻԱՏԵՂ ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՇՈՒՐՁ**

Երեքշաբթի, Ապրիլ 24-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Թեմիս բարեջան առաջնորդ բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկիեանի եւ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեանի, Հոլիվուտի Հայ Միացեալ Ուսանողաց Միութեան կազմակերպած քայլարշաւին մասնակցեցաւ: Առաջնորդ Սրբազան Հայրը, պահանջատեր եւ բազմահազար ուխտաւոր երիտասարդ հայորդիներու քայլարշաւին բացումը աղօթքով կատարեց եւ իր խօսքին մէջ շեշտեց թէ այս քայլարշաւը լոկ ցուցական բնոյթ չունի, այլ յարգանքի ոգեկոչում է մեր մէկ ու կէս միլիոն զոհերու յիշատակին: Մահարշաւ չէ՛ այս, այլ աղօթքի, կեանքի եւ յոյսի միասնականութեան տողանցք, գիտակից յանձնառութիւն անոնց անաւարտ կեանքին, արդարութեան եւ իրաւունքներու վերահաստատման:

Ապա ժամը 11:00-ին, Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ, մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու հոգիներու խաղաղութեան, արդարութեան եւ ուխտի վերանորոգութեան համար տեղի ունեցաւ հաւաքական հոգեհանգստեան արարողութիւն, մասնակցութեամբ երեք յարանուանութեանց հոգեւոր Առաջնորդներուն, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանի, ինչպէս նաեւ պետական ու միութենական բազմաթիւ ներկայացուցիչներու:

### **ԿԼԵՆՏԵՅԼԻ ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԸ**

Մեծ Եղեռնի՝ Ապրիլեան զոհերու յիշատակութեանց ձեռնարկներու ծիրին մէջ, Կլենտելի քաղաքապետարանը եւս կազմակերպած էր Ապրիլեան Եղեռնի ոգեկոչման յատուկ ձեռնարկ մը, Երեքշաբթի, Ապրիլ 24-ի երեկոյեան ժամը 7-ին, Կլենտելի Ալէքս հանդիսարահին մէջ:

Սոյն ձեռնարկին, ներկայ էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Էջմիածնական թեմի Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տերտերեան, Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեան, վարդապետաց, քահանայից եւ սարկաւազաց դասերը:

Կլենտելի երկրորդական պետական վարժարանի աշակերտական երգչախումբը Ամերիկեան եւ Հայրենի պետական քայլերգներու երգեցողութենէ ետք, յայտագրին բացման խօսքը կատարեց քաղաքապետարանի խորհուրդի ատենապետ Տիար Արա Նաճարեան, ապա խօսք առին վաւերագրական ժապաւեններու հեղինակ եւ մրցանակակիր Մարթին Զէնթ եւ երաժշտագետ ու հեղինակ Ալէք Գուլումճեան, ինչպէս նաեւ Միացեալ Հայ Ուսանողական Միութեան երիտասարդներ՝ որոնք շեշտեցին Հայոց դատը ամբողջ աշխարհին կողմէ արդարօրէն ընդունուելու հրամայականը, միաժամանակ այլ ցեղասպանութիւններ կանխարգիլելու անհրաժեշտութիւնը:

Գեղարուեստական կոկիկ յայտագրին մաս կազմեցին »Կոմիտաս« սենեկային նուագախումբը, ղեկավարութեամբ՝ Միքայէլ Աւետիսեանի, երիտասարդ արուեստագետ երաժիշտներ, երգիչներ եւ երգչուհիներ որոնք երաժշտական

տաղանդով եւ ներկայացումներով, յարգանքի իրենց տուրքը ընծայեցին Մեծ Եղեռնի զոհուածներու յիշատակին:

Յայտագրի աւարտին, Առաջնորդ Սրբազան հայրերու գլխաւորութեամբ, հոգեւորականաց եւ ժողովուրդի մասնակցութեամբ նահատակաց հոգիներու խաղաղութեան համար աղօթք վերառաքուեցաւ եւ հաւաքական »Յայր Մեր«ի արտասանութեամբ վերջ գտաւ Ապրիլեան նահատակաց ոգեկոչման հանդիսութիւնը:

### ON THE 92<sup>ND</sup> ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE

## **CHURCH SERVICES AND COMMUNITY GATHERINGS WITH THE PARTICIPATION OF ARMENIAN SPIRITUAL LEADERS**

To commemorate the 92<sup>nd</sup> anniversary of the Armenian Genocide, Divine Liturgy, requiem services, and community gatherings were organized with the participation of the Armenian Apostolic, Evangelical, and Catholic churches and leaders.

The commemorations began with Divine Liturgy at St. Mary's Church in Glendale on the evening of Monday, April 23<sup>rd</sup>. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the service which was conducted by Very Rev. Fr. Muron Aznikian. During the service remarks were delivered by the Prelate as well as by Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of N. America, and Very Rev. Fr. Andon Saroyan, Rector of the Armenian Catholic Church. Following the Liturgy requiem service was conducted by the Prelate at the Genocide monument in the courtyard of the church.

On the morning of Tuesday, April 24<sup>th</sup>, the Prelate offered the opening prayer at the Little Armenia march organized by the United Armenian Students Association and participated in the march accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Vazken Atmajian. At 11:00 a.m. the Prelate and spiritual leaders of the Armenian Evangelical and Catholic Churches conducted requiem service at the Genocide memorial monument in Montebello,

On the evening of April 24<sup>th</sup>, the Prelate attended a Genocide commemoration event at Alex Theatre organized by the Glendale City Council. At the end of the program prayers were offered in memory of our martyrs by Archbishop Mardirossian and Archbishop Derderian, and the evening came to a close with the collective recitation of the Lord's Prayer.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.